ԱՐՑԱԽԵԱՆ ՕՐԱԳԻՐ

Անցած շաբաթը որեւէ էական շտկում չմտցրեց Արցախի լարուած կացութեան մէջ:

Շարունակւում են փոխհրաձգութիւնները, հրթիռակոծութիւնները, մարդկանց առեւանգման դէպքերը, խափանարարութեան եւ աւազակային յարձակումների փաստերը: Ցնցած որ ընդհարուող կողմերի միջեւ տեղի են ունեցել մասնաւոր բնոյթի բանակցութիւններ, կրակի դադարեցման, լարուածութեան թուլացման շուրջ, սակայն դրանք հիմնականում կրում են ձեւական բնոյթ եւ հանդիսանում են կոնկրետ պահի հաղթականութեան արդիւնք: Լարուածութեան հիմնական օջախներ են մնում Շահումեանի շրջանը՝ մասնաւորապէս Կարաչինար գիւղը, շրջակայքը, Մարտունի քաղաքն ու թուրքաբնակ Խոջավենդ թաղամասը, Ստեփանակերտը եւ թուրքաբնակ Կրկժան թաղամասը: Հոկտեմբերի 9ի առաւօտեան Ստեփանակերտի թիւ 3 դպրոցի վրայ Կրկժանի կողմից յարձակման ժամանակ զոհուել է 1 ադրբեջանցի, զինուորականների կողմից գերուել են 6ը, որոնք այնուհետեւ տեղափոխուել են Շուշիի բանտ, իսկ գործի բընութիւնը յանձնուել է ազերի քննիչներին: 8ի լոյս 9ի գիշերը Շուշիի շրջանի տարածքում վերջին 10 օրւայ մէջ չորրորդ անգամ պայթեցուել է Ստեփանակերտի ջրմուղը, որը այդպէս էլ չէր վերանորոգուել նախորդ պայթիւնից յետոյ: Առաւօտեան դէպքի վայր մեկնած զրահամեքենան, որում գտնուել են նաեւ ջրմուղը նորոգող հայ բանուորներ, ենթարկուել է հրաձգութեան Ղայբալու գիւղի կողմից: Զրահամեքենան վերադարձել է Ստեփանակերտ: Նոյն օրը արտակարգ շրջանի պարետատան միջնորդութեամբ Շուշիի Ակերանի շրջանի եւ Ստեփանակերտի ներկայացուցիչների միջեւ կայացուել է համաձայնութիւն, որի էութիւնը շարադրուած է հետեւեալ կէտերում.

1. Հոկտեմբերի 11ից դադարեցնել շրջանների բնակավայրերի զընդակոծութիւնը:

2. Հոկտեմբերի 12ից, ժամը 8ից ապահովել մարզի բոլոր ճանապարհների անվտանգութիւնը:

3. Պատանդների փոխանակութեան ուղղութեամբ՝ համաձայնեցնել մեխանիզմ:

4. Համատեղ հաղորդագրութեամբ նախատեսուած խնդիրների լուծման մեխանիզմ մշակել եւ Հոկտեմբերի 16ից ձեռնամուխ լինել դրանց իրագործմանը:

Արդէն Հոկտեմբերի 10ին ադրբեջանական կողմը խախտեց կայացած պայմանաւորուածութիւնը՝ կէսօրից յետոյ Ղայբալու գիւղի մօտակայքում յարձակուելով Ստեփանակերտի պայթեցուած ջրմուղը վերանորոգող հայ բանուորների վրայ: Ցնցած զրահամեքենաների պատասխան կրակը ստիպեց նրանց նահանջել, սակայն վիրաւորուեց ու հիւանդանոց տեղափոխուեց 45ամեայ Մանուէլ Մարտիրոսեանը:

Հոկտեմբերի 11ին վաղ առաւօտեան հզօր պայթիւնով շարքից հանուել է Շուշի քաղաքին ջուր մատակարարող պոմպակայանը: Դէպքի վայր այցելած մի զինուորականի վկայութեամբ կայանի շէնքը հողին է հաւասարեցուել:

Հոկտեմբերի 13ի լոյս 14ի գիշերը պայթեցուել է Ստեփանակերտի մի մասը խմելու ջրով ապահովող Տլակէտի ջրամբարը: Ենթադրւում է, որ գործողութիւնը կատարուել է Ջամիլլու գիւղի ազերիների օգնութեամբ: Միայն վերջին 20 օրերին էր սկսել վերանորոգումից յետոյ աշխատել Ստեփանակերտի միւս՝ Ղայ բարիշէնի ջրատարը: Մշտական լարուածութիւնը, իհարկէ, չէր կարող իր բացասական հետեւանքները չունենալ Ստեփանակերտի ընկերային-տնտեսական դրութեան վրայ: Քաղգործկոմի նախագահ Մաքսիմ Միրզոյեանը «Ինտերֆաքս»ի թղթակցին տուած հարցազրոյցի ժամանակ հաղորդել է, որ ներկայումս քաղաքի բնակչութեան միայն 15-20 տոկոսն է աշխատանքով ապահովուած: Ըստ նրա, աշխատաւորներին աշխատավարձ վճարելու համար բոլորովին չկայ, իսկ բիւջէտային բոլոր կազմակերպութիւնները գործնականում զրոյի վրայ են նստած: Մ. Միրզոյեանը նշել է, որ 4 տարուայ ընթացքում քաղաքում բնակարանային շինարարութիւն, ճանապարհների նորոգում փաստօրէն չի կատարուել: Ստեփանակերտ ուղարկուած ճանապարհային ողջ տեխնիկան բեռնաթափուել է ԼՂՀի ադրբեջանաբնակ շրջաններում: Վառելիքի պակասի պատճառով մարզում ամբողջութեամբ վերցուած հաւաքուել է աճեցուած խաղողի միայն 7 տոկոսը: Նոյն պատճառով ամբողջութեամբ չի հաւաքուել նաեւ հացահատիկի բերքը: Արդիւնքը խանութների առջեւ զոյացած հերթերն են եւ անասնագլխաքանակի կրճատումը: Մ. Միրզոյեանը նաեւ նշել է, որ գիւղատնտեսութեան նորմալ զարգացման դէպքում 3-4 տարի յետոյ Արցախը իւրաքանչիւր շնչի հաշուով կը տար 400 կգ միս: Մտահոգիչ երեւոյթ է նաեւ այն, որ Ստեփանակերտում շարունակում են աճել գործազուրկների շարքերը:

Մարտունիում չի նուազում իրավիճակի լարուածութիւնը: Հոկտեմբերի 13ին Մարտունու շրջանի ադրբեջանաբնակ գիւղի կողմից արձակուած կրակոցներից վիրաւորուել է Շեբէր գիւղ Հադրութից հիւր եկած Կամօ Արզումանեանը: Նոյն գիշեր Սօս գիւղի ծայրամասի թաղերից մէկը ներխուժելով, ադրբեջանցիք վիրաւորել են Շահէն Դանիէլեանին, կապոտած ձեռքերով խցկել իր իսկ մեքենան եւ ուղղուել են դէպի Ֆիզուլու շրջան: Բարեբախտաբար, Շահէն Դանիէլեանին յաջողուել է ճանապարհին դուրս թռչել մեքենայից ու փախչել:

Հոկտեմբերի 12ի առաւօտեան Ֆիզուլու շրջանի Ղաջար գիւղից յարձակման է ենթարկուել Սօս գիւղի «Ամարաս» տեղանքը: Հայերը ու գիւղում տեղաւորուած զինուորական պահակախումբը ստիպել են նրանց նահանջել: Վիրաւորուել է 1 զինուորական: Գրեթէ նոյն ժամին, մէկ այլ խումբ փորձել է գողանալ Մաճկալաշէնի 13 գլուխ խոշոր եղջերաւոր անասունը, սակայն հակահարուած ստանալով, փախել է:

Հոկտեմբերի 10ին ողջ օրը զընդակոծուել է Շահումեանի շրջանի Կարաչինար գիւղը: Նրկատելի էին ՕՄՕՆականների մեծ կուտակումներ: Ադրբեջանցիք փորձել են յաւելեալ ուժ իջեցնել, սակայն հանդիպել են ուժեղ դիմադրութեան: Ինքնապաշտպանութեան մարտիկներին յաջողուել է խփել ուղղաթիռը, որը նողոպրելով մարտադաշտից, բլրի միւս կողմում պայթել է: Մարտի ժամանակ զոհուել են Հ.Յ.Դ. անդամ մարտիկներ Արշաւիր Սարգսեանը եւ Աբաբէկ Վարդանեանը: Ադրբեջանցիք ունեցել են մէկ տասնեակից աւելի զոհ: Անցած շաբաթուայ ընթացքում չեն դադարել ընդհարումները նաեւ Հադրութի ու Մարտակերտի շրջաններում: Ամենից մտահոգիչն այն է, որ ադրբեջանցիք աւելացնում են ՕՄՕՆի քանակը, կատարելագործում նրանց ունեցած ռազմական տեխնիկան, որի շարքում այսօր կան բազմաթիւ զրահամեքենաներ, ուղղաթիռներ, ինչպէս եւ աւելի փոքր չափերի ոչ խորհրդային զէնք: Այսպէս շարունակուելու դէպքում առաջիկայում աւելի ու աւելի է դժուարանալու հայկական փոքրաթիւ ջոկատների հակահարուած տալու կարողութիւնը: Եղածին զումարենք նաեւ այն, որ օրերս Ադրբեջանի ԳԽ օրէնք է ընդունել Ազգային Ինքնապաշտպանական Ուժերի մասին: Օրէնքում մասնաւորապէս ասուած է, որ «Ազգային ինքնապաշտպանութեան ուժերը պետական զինուած կազմակերպութիւն է՝ հիմնուած խելամիտ բաւարարութեան սկզբունքի վրայ եւ կոչուած՝ ապահովելու Ադրբեջանի հանրապետութեան անվտանգութիւնը: ԱԻՈԻի գլխաւոր հրամանատարը Ադրբեջանի հանրապետութեան նախագահն է»: ԱԻՈԻի կազմը ձեւաւորւում է 18 տարին լրացած զինծառայողների թուից, 18 ամիս ժամկէտով, ինչպէս նաեւ ազատավարձու քաղաքացիներից: Օրէնքը նախատեսում է այլընտրանքային ծառայութիւն: Ըստ Հոկտեմբերի 11ի «Վեստի» ծրագրի հաղորդագրութեան, խօսքն այստեղ ազգային բանակ ստեղծելու մասին չէ: Հաղորդուել է նաեւ, որ նոյն օրը, Պետական Խորհրդի աշխատանքներին մասնակցելու նպատակով Մոսկուա մեկնած Մութալիբովը յայտարարել է, թէ Ադրբեջանը կը ստորագրի տնտեսական համագործակցութեան ծրագիրը միայն այն դէպքում, եթէ Ադրբեջանում գտնուող խորհրդային բանակը հանրապետութիւնում ստեղծուող զինուած ուժերին փոխանցի իր ունեցած ողջ զէնքը:

Նշուած փաստերը, կարծում ենք, չպէտք է անտարբեր թողնեն Հայաստանի իշխանութիւններին:

Նիւթերը վերցուած են Հ.Յ.Դ ՄՏԿից